



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

22 մայիսի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1  
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի  
Անդամակցությամբ՝ Ա. Գյուլումյանի  
Ա. Թունյանի

Քննության առնելով Էդիկ Հովսեփյանի անհատական դիմումի  
ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Էդիկ Հովսեփյանի /ներկայացուցիչ՝ փաստաբան ժորա Խաչատուրի Խաչատրյան/  
04.05.2017թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով. «Որոշել ՀՀ քրեական  
օրենսգրքի 336-րդ և 349-րդ հոդվածների ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության  
հարցը՝ հաշվի առնելով իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունը:  
(ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասին և 79-րդ հոդվածին)»:

2. Դիմողի փաստարկները հիմնականում հանգում են հետևյալին.

Դիմողը գտնում է, որ ոչ հստակ և անորոշ են սահմանված ՀՀ քրեական օրենսգրքի  
349-րդ հոդվածով նկարագրված հանցակազմի օբյեկտիվ կողմը, 336-րդ հոդվածով

սահմանված հանցակազմի սուբյեկտը, ինչը հանգեցրել է իր իրավունքների և ազատությունների անհիմն սահմանափակման՝ ազատագրկման դատապարտման եղանակով:

Ըստ դիմողի՝ վիճարկվող հոդվածներով նախատեսված հանցակազմերի անորոշությունը հնարավոր է դարձրել իրավակիրառ պրակտիկայում դրանց իմաստի տարածական մեկնաբանումը, որի հետևանքով խախտվել է միայն օրենքի հիման վրա դատապարտվելու՝ ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածով և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածով նախատեսված՝ պաշտպանվողի իրավունքը:

Դիմողի կարծիքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի դիսպոզիցիան անորոշ է այնքանով, որքանով բացահայտված չէ «ապացույց կեղծել» հասկացությունը, ինչը տեղիք է տվել հոդվածի տարածական մեկնաբանման՝ ապացույցի կեղծում համարելով նաև ցուցմունք տվող վկային ուղղորդելը:

Դիմողը նշում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 336-րդ հոդվածի իմաստով հանցագործության սուբյեկտ է ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկող պաշտոնատար անձը: Մույն հոդվածում առկա անորոշությունը վերաբերում է նրան, որ բացահայտված չեն «քրեական պատասխանատվության ենթարկել» հասկացության իմաստն ու բովանդակությունն այն պարագայում, երբ անձին քրեական պատասխանատվության ենթարկել կարելի է վերջնական դատական ակտով, որի իրավասությունը պատկանում է դատարանին:

3. Ուսումնասիրելով դիմումը և գործում առկա նյութերը՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը պարզեց.

առկա չեն դիմումի քննությունը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

### **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. «Էդիկ Հովսեփյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 336-րդ և 349-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

**Նախագահող՝**

**Անդամներ՝**

22 մայիսի 2017 թվականի  
ՍԴԴԿՈ/1-12